

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՄԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Սովորողների ինքնուրույնության և ստեղծագործական ակտիվության
բարձրացումը որպես մանկավարժական գործունեության խնդիր»

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝

ՀՀ Սյունիքի մարզ գ. Դարբասի միջնակարգ դպրոց

ՀԵՂԻՆԱԿ՝ Արմանուշ Ասատրյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Վարդանյան

Բովանդակություն

1. Ներածություն-----	3
2. Ինքնուրույնությունը և նախաձեռնությունը-----	4
3. Սովորողների ինքնուրույնության և ստեղծագործական ակտիվության բարձրացումը որպես մանկավարժական գործունեության խնդիր -----	8
4. Մտավոր զարգացման հիմնական ցուցանիշները	
5. Ինքնուրույն աշխատանքներ կատարելու պահանջները դասապրոցեսում-----	10
6. Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևեր-----	11
7. Եզրակացություն-----	20
8. Օգտագործված գրականության ցանկ-----	21

Ներածություն

Այժմ բոլոր ոլորտներում, այդ թվում նաև կրթության համակարգում, գիտա-կան ու տեխնիկական առաջընթացով պայմանավորված, շարունակական կերպով տեղի է ունենում արդիականացման գործընթացներ, որոնց հիմնա-կան նպատակն է համակարգել հնարավոր բոլոր ռեսուրսները՝ տեխնոլոգիա-կան , մարդկային՝ դրանք ծառայացնելու կրթական նոր ու արդիական ապա-հովմանը: Կրթական բարեփոխումների առանցքում կրթության առանցքային խնդիրը հանդիսանում է վերաբժնորել սովորողների գործառույթները ու պարտականությունները՝ հաշվի առնելով ժամանակի մարտա հրավեր-ները: Այսօրվա երեխաներին ընձեռված է նորարական ծրագրերով և տեխնոլո-գիաներով կրթելու հնարավորությունը: Նոր ինտերակտիվ մեթոդների ներ-դրումը կրթական համակարգ հնարավորություն է տալիս սովորողին դառնալ դասի ընթացքում նախագծող, և արդյունքում բուն դասապրոցեսը դադարում է սովորողի համար լինի ձանձրալի, ավելին՝ սովորողը մոտիվացվում է; Կրթա-կան բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և սովորողի դերի ու գործառույթների վերաբժնորում: Նմանօրինակ բարեփոխումները մեծապես խթանում են սովորողի ինքնուրույն և նախաձեռնողականության զարգաց-մանը , ինչպես նաև ստեղծագործ մտածելու և գործելու կարողությանը: Իսկ այս համընդհանուր զարգացող աշխարհում առանձնահատուկ կարողություն է մարդու ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը: Այս պարա-գայում առաձևակի կարևորություն ունի ուսուցչի զանազան մեթոդա-մանկավարժական հնարների, դասի զանազան տիպերի ու ձևերի ներդրումը, որի արդյունքում կարող է հասնել ՀՊԶ-ով սահմանված վերջնարդյունքերի, որոցից են սովորողների ինքնուրույն, նախաձեռնող և ստեղծագործական ունակություններով զարգացած անհատի ձևավորումը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումներով, կրթական չափորոշիչերով սահմանված վերջարդյունքներով, համաձայն որի ուսուցիչն ամեն կերպ պետք է խթանի սովորողի ինքնուրույն մտածելու, կշռադատելու , կարծիք հայտնելու, կարևորելու որպես նախաձեռնող հանդես գալու, ստեղծագործաբար մտածելու ունակությունները, խթանելու սովորողի ինքնուրույն գործելու ցանկացած դրսևորում:

Հետազոտության նպատակը: Շեշտադրել աշակերտակենտրոն դասի կարևորությունը՝ որպես կրթական որակի բարձրացման հիմնական նախապայման, այդ գործընթացում կարևորել

ուսուցիչ-աշակերտ համագործակցությունը, ինչպես նաև ուսուցչի գործառական դերը սովորողի ինքնուրույնության, ստեղծարարության ու նախաձեռնության դրսևորումների, աշխատելու ուակության որակի բարձրացմանը:

Հետազոտության խնդիրները: Շեշտադրել ակտիվ ուսուցման արդյունավետությունը, ձևավորել ինքնակազմակերպման հմտություն, արժևորել սովորողի անկախ, ինքնուրույն գործելու, դասի ընթացքին ստեղծարար մոտեցում ցուցադրելու կարևորությունը՝ որպես կրթական համակարգի արդիականացման բաղադրիչ, որտեղ դասավանդողն ու սովորողը հանդես են գալիս որպես համագործակցող սուբյեկտեր:

Որպեսզի երեխան չդառնա գիտելիքների պահեստարան, ճշմարտությանների, կանոնների և բանաձևերի պահեստասենյակ, պետք է նրան սովորեցնել մտածել:

/Մուխումյենսկի/

1. Ինքնուրույնություն և նախաձեռնողականություն

Ուսուցչի կողմից սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացմանն ուղղված քայլերի ռազմավարությունը:

- Ինքնուրույնությունը սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր, մտավոր ունակությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է, նաև անհատին հատուկ ու բնագոյային հատկություններից մեկը ,որին անձը ձգտում է ծնված օրվանից:

Ներկա ժամանակներում, առավել քան երբևէ, մարդու ցանկացած գործնեության համար առանցքային նշանակություն ունեն ինքնուրույն որոշումներ կայացնելու , արագ ու նպատակային գործելու,ինչպես նաև նախաձեռնող լինելու ունակությունները: Նման ունակությունների անհրաժեշտությունը բացատրվում է ներկայիս առաջ քաշած մարտահրավերներով, քանզի ամենժամյա ռեժիմով կյանքի բոլոր ոլորտները գրանցում են աննախադեպ առաջընթաց: Վերը նշված հատկանիշները, հմտություններն ու կարողությունները, որպես կանոն զարգանում է հանրակրթական ուսումնական հաստատությունում, որտեղ կայանում է անձի կրթական ու դաստիարակչական

առանցքային գործընթացը: Ուստի, հենց այստեղ է անձն իր կյանքի մի քանի առանցքային շրջափուլերում սկսում գործել ինքնուրույն, հանդես գալ նախաձեռնողի դերում: Զարգանում ու արդիականացվում է նաև կրթական համակարգը՝ փորձելով գործի դնել նոր աշխարհի

կանոններով ապրող մարդու կրթության իրավունքը՝ հաշվի առելով կրթական նոր տեխնոլոգիաներն ու առաջավոր փորձը:

Ուսումնական գործընթացի կենտրոնում սովորողն ու սովորեցնողն են:

Ժամանակակից ուսուցչի որակներից հատկապես առանձնակի կարևորություն և ուրույն դերակատարություն ունի հանդուրժողականությունը, շփվելու, հաղորդակցվելու, համագործակցելու, ոգևորելու կարողությունը, գենդերային անկողմնակալությունը և այլն: Եթե ինչ-որ ժամանակ առաջ սովորողին պարտադրվում էր այս կամ այն գիտելիքի, հմտության յուրացում՝ անտեսելով նրա դիրքորոշումն ու վերաբերմունքը, ապա այսօր երեխան ինքն է իրեն ձևավորում, իսկ ուսուցիչը պարզապես փորձում է ազդել նրա վրա ուղղորդելով: Եթե այդ ազդեցությունը չի համընկնում սովորողի ներքին աշխարհի հետ, այն ետ է մղվում երեխայի կողմից, իսկ կրթական գործընթացի բոլոր մասնակիցները փոխ-լրացնում են միմյանց, այդ իսկ պատճառով կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է նաև նրանով, թե որքանով են ուսուցիչները պատրաստ համագործակցության ու փոխվստահության մթնոլորտի ձևավորման:

Ինքնուրույնության ձևավորման նախադրյալը ազատությունն է: Որպեսզի աշակերտն ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է տալ այդ հնարավորությունը՝ ազատելով սխալվելու վախից: Ինքնուրույնության և նախաձեռնողականության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը՝ խթանելով հնարավորություններն ու կարողությունները իրատեսորեն գնահատելու հատկանիշը: Ինքնուսուցման պարագայում սովորողն ինքն է իր իմացական գործունեությունը կազմակերպում, կարգավորում և հսկում:

Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացման առանցքում պետք է դնել ակտիվ ուսուցումը, որն իրենից ենթադրում է այնպիսի մեթոդական համակարգի կիրառում, որը չի նախատեսում ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն: Ակտիվ ուսուցման հիմքում ընկած է պրակտիկ և ճանաչողական գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում սովորողների կողմից:

Ակտիվ մեթոդների կիրառումն ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, մտածողության զարգացմանը: Ժամանակակից ուսուցման ակտիվ մեթոդներն ուղղված են խթանելու սովորողների մտածողությունը, որը բնութագրվում է բարձր ինտերակտիվության, մոտիվացիայի և հուզական ընկալումների առկայությամբ:

Ակտիվ ուսումնական գործընթացի բնութագրիչներից են.

Ինքնուրույնությունն նախաձեռնողականությունը՝ առաջնային պահանջմունք Սովորողների իմացական ձեռքբերումներն աճում են, երբ նրանք օգտագործում են մտածողության մեթոդների ողջ համալիրը: Այդ մեթոդների օգտագործումն ուսումնական նպատակային փորձառության ընթացքում օգնում է սովորողին՝ ինքնուրույն սովորելու ընթացքը գիտակցել որպես սեփական գործունեություն(Պալինկսար և Բրաուն, 1989): 21-րդ դարի մարդուն՝ ապահով ապրելու և ներդաշնակ գործելու համար անհրաժեշտ են քննադատական, ստեղծագործական և գործնական հմտություններ : Ժամանակակից դպրոցը պահանջ ունի այնպիսի մանկավարժների, ովքեր իրենց մասնագիտական որակների շնորհիվ կարողանում է հարստացնել ուսուցման և դաստիարակության մեթոդները, ավանդական մեթոդների կողքին լայնորեն կիրառել ժամանակակից փոխներգործուն մեթոդները՝ նպատակ ունենալով զարգացնել սովորողի մոտ մի շարք կարողունակություններ, որոնք առաջնային դեր ունեն այսօրվա աշխարհում:

Ակտիվ ուսուցումը՝ համեմված մի շարք փոխգործուն մեթոդամանկավարժական հնարներով, ինչպիսիք են՝ կլոր սեղան, բանավեճ, ԳՈԻՄ, մտագրոհ, ճանապարհային քարտեզ, ունակ է բավարարել սովորողների կրթական պահանջմունքները՝ միևնույն ժամանակ սովորողի մոտ ձևավորելով շփվելու, հաղորդակցվելու, համագործակցելու, երևակայելու, ապագան կանխատեսելու և պլանավորելու, սեփական կարծիք ձևավորելու և արտահայտելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու և որոշում կայացնելու կարողությունները: Միևնույն ժամանակ կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետությունն այսօր պայմանավորված է նրանով, թե որքանով է ուսուցիչը պատրաստ համագործակցության մեջ մտնել սովորողի հետ, թույլ տալ որ վերջինս երբեմն շրջանցի ավանդական դասի կարմիր գծերը, լինի ազատ իր որոշումների մեջ, հայտնի իր հետաքրքրությունների մասին՝ դրանով լուծելով անցում սոցիալիզացվելու սեփական պահանջմունքը: Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համա-պատասխան մոտեցումներն ու սպասումները ինչպես տարիքային տարբեր փուլերում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում: Այս կամ այն ֆիզիկական երևույթը գիտափորձով ցույց տալը, դրա վերաբերյալ խորքային զրույցը, բանավեճը, խմբային կամ անհատական եղանակով արդյունքների ամփոփումը սովորողի մոտ կայունացնում և ամրակայում է ստացած գիտելիքը: Նմանօրինակ գործնական դասերը սովորողներին թույլ են տալիս համագործակցել միմյանց հետ, սովորել իրար սովորեցնելով, եզրահանգումներ անել, բանավիճել, գտնել համախոհներ՝ միևնույն ժամանակ անցում ինտեգրվելով համագործակցային աշխատանքի մեջ: Ի վերջո սոցիալականացման գործընթացի հաջող հոսքը կախված է անհատի ակտիվ դիրքից և սոցիալական փորձի ձուլման աստիճանից: Ինքնակայանալու զարգացումը իր ամենատարբեր դրսևորումներով կախված է

նրանից, թե որ ոլորտում է դեռահասը փորձում հաստատվել, ինչ բնույթ է ձեռք բերում նրա ինքնուրույնությունը հասակակախցների հետ հարաբերություններում, ազատ ժամանակի օգտագործման, տարբեր զբաղմունքների, տնային գործերի կատարման մեջ: Այստեղ կարևոր է նաև ուսուցչի կողմից սովորողին խրախուսելը, հետաքրքրասիրությունների ու հուզող հարցերի բավարարումը, նրանց տարբեր գործողություններում ներգրավելը, համագործակցային հարաբերություններ հաստատելը: Նմանօրինակ գործելաոճը հենց այն ուղին է, որով կարելի է շահել սովորողի վստահությունը, բերել նրան կառավարելի դաշտ: Սովորողների մասնակցությունը կրթական գործընթացին ենթադրում է, որ նրանք պետք է դառնան այդ գործընթացի գործընկերային կողմ՝ իրենց դերերով, պատասխանատվությամբ ու իրավասության շրջանակով: Այս սկզբունքի համաձայն սովորողի ու ուսուցչի միջև պետք է գործի համագործակցություն, վստահություն, և հարգանք, քանի որ կրթողները իրենք ևս սովորողներ են և սովորողը կարող է աղբյուր հանդիսանալ կրթողի համար նոր գիտելիքների ձեռքբերման համար: Մանկավարժական այս մոտեցումը, կարծում ենք, ժամանակի ընթացքում հնարավորություն կտա լուծել մեր առջև դրած խնդիրը, այն է՝ սովորողի մոտ զարգացնել ինքնուրույնություն ու նախաձեռնողականություն: Վերջին տասնամյակներում գիտությունն ու տեխնոլոգիաներն աննախադեպ առաջ ընթաց են գրանցել: Դեռ ոչ վաղ անցյալում մարդն արդեն հասցրել էր լինել տիեզերքում, թափանցել ատոմի մեջ, փոխել անեզր ջրերի ընթացքն ու սովորել կառավարել բնության երևույթները: Իսկ ահա վերջին տասնամյակներում գիտության ու տեխնոլոգիաների զարգացումն իսկական տեխնոլոգիական հեղափոխություն կերելի է համարել՝ հաշվի առնելով մարդկության պատմության զարգացումը: Նորագույն տեխնոլոգիաների շնորհիվ հնարավոր է դարձել էլեկտրամագնիսական ալիքների շնորհիվ փոխանցել ինֆորմացիա, պատկերներ, հաղորդակցվել մեծ հեռավորությունների վրա: Եվ այս ամենը մարդու գիտելիքի, երևակայության, նախաձեռնողականության ու ստեղծարար մտքի արդյունքն է: Մեր նորօրյա իրավիճակը նոր մարտահրավերներ է առաջ բերում ստեղծարար մտքի զարգացման համար /հայրենիքի պաշտպանությունը նոր տեխնոլոգիաներով/

2. Սովորողների ինքնուրույնության և ստեղծագործական ակտիվության բարձրացումը որպես մանկավարժական գործունեության խնդիր

Ստեղծագործելը դիտարկում են որպես անձի զարգացման կարևորագույն մեխանիզմ: Քանի որ դպրոցական տարիներին անձի կայացման տարիներ են, ապա ուսուցչի գլխավոր խնդիրը սովորողների ստեղծագործ անհատականության ձևավորման համար պայմաններ ապահովելն է: Հայտնի է, որ ստեղծագործումը ձևավորվում է գործունեության մեջ: Հարց է առաջանում, թե

ինչպե՞ս կառուցել սովորողների ուսումնական գործունեությունը, որպես առավելագույնս բացահայտվեն նրանց ստեղծագործական ունակությունները:

Սովորողների ստեղծագործական մտածողության հաջող զարգացման կարևոր պայմանը մտածելու ընդհանուր կուլտուրայի առկայությունն է, այդ պատճառով ուսումնական գործունեությունը դասերին ուղղվում է, առաջին հերթին, սովորողի ինտելեկտուալ ունակությունների զարգացմանը. կարողանալ վերլուծել, սինթեզել, գտնել պատճառահետևանքային կապերը, ընդհանրացնել, եզրահանգել, դասակարգել, համեմատել և այն: Բացի դրանից, ուսումնական ստեղծագործական գործունեությունում օգտագործվում են այնպիսի ինտելեկտուալ ընդունակություններ, ինչպիսիք են հետաքրքրասիրությունը՝ զգայությունը շրջակա աշխարհի հիմնախնդիրների նկատմամբ, վարկած մշակելու ընդունակությունը, մտքի արագությունը և ճկնությունը՝ անցումը մի գաղափարից մյուսին, մտածելու յուրահատկությունը հեշտությունը: Նշված ինտելեկտուալ ընդունակությունների զարգացումը, որոնք որոշում են սովորողի կրեատիվությունը, իրականացվում են դպրոցում ֆիզիկայի դասերի ժամերի ստեղծագործական բնույթի առաջադրանքերի ընդգրկումն է: Դրանց թվին են դասվում պրոբլեմային խնդիրները: Ստեղծագործական բնույթի խնդիրները սովորողներից պահանջում են ինքնուրույն մտածողություն:

Ըստ բովանդակության՝ ստեղծագործական խնդիրները բաժանվում են իմացական և ոչ ստանդարտ խնդիրների, որոնք կարող են ունենալ լուծման մի քանի տարբերակներ և մեկ ճիշտ պատասխան: Դրանք են փորձնական և կառուցողական խնդիրները, որոնք զարգացնում են տրամաբանելու և համակցելու ընդունակությունները: Ստեղծագործական բնույթի խնդիրները ուղղված են սովորողների անձի զարգացմանը: Եթե սովորողը բարելիւղճ և ինտեսիվ աշխատում են, բայց մնում են սկզբնական գործողություն եղանակի շրջանակներում: Նրանց համար բնութագրական է առանց նախաձեռնությամբ դրսից տրվածի ընդունումը:

Հաջորդ խմբի մոտ բնութագրական է այս կամ այն չափով ինտելեկտուալ ակտիվության նախաձեռնության դրսևորում, ինչը չի խթանվել ո՛չ դրսի գործոններով, ո՛չ էլ գործունեության արդյունքի սուբյեկտիվ գնահատմամբ: Տիրապետում է բավականին հուսալի աշխատանքի մեթոդի, վերլուծում է, համադրում է միմյանց հետ տարբեր խնդիրներ, ինչը սովորողին հանգեցնում է նոր՝ սրամիտ լուծման եղանակի: Փորձով հայտնաբերված օրինաչափությունը սովորողի համար դառնում է ոչ թե մտավոր գործունեության վերջին կետ, այլ՝ հետագա աշխատանքի ինքնուրույն նպատակ: Տեսնելով օրինաչափությունը՝ սովորողը իրեն հարց է տալիս ի՞նչ է կանգնած սրա հետևում:

Ստեղծագործության հիմնական խոչընդոտը անձի մոտիվացիոն կառուցվածքի դեֆորմացիան է: Դրա համար էլ պետք է խոսել դպրոցում ստեղծագործ անհատականություն

ձևավորելու խնդրի մասին, և ոչ միայն ստեղծագործական կարողությունների զարգացման մասին, այլ ամեն դեպքում ստեղծագործական անհատականությունը ենթադրում է մտավոր գործունեության բարձր մակարդակ:

3. Մտավոր զարգացման հիմնական ցուցանիշները- սա գիտելիքների հարուստ պաշար է, համակարգային գիտելիքների աստիճան, մտավոր գործունեության ռացիոնալ մեթոդների (մեթոդների) տիրապետում: Ուսուցումը որպես գիտելիքի կուտակում ըմբռնելը և միևնույն ժամանակ դրանցով գործելու եղանակներին տիրապետելը վերացնում է ուսուցման և ստեղծագործական զարգացման գործընթացների հակասությունը: Այսպիսով, ուսուցիչը պետք է հոգ տանի ոչ միայն սովորողների մտքի գործընթացների արտաքին վերահսկման, այլև ուսումնական գործնեության ինքնակարգավորման ապահովման մասին առնելով սովորողի արդեն ձևավորված վերաբերմունքը ուսման նկատմամբ: Կարևոր է հիշել, որ ինտելեկտուալ գործնեության բարձր մակարդակ, որի դեպքում հնարավոր է ստեղծագործական խնդիրների լուծում, դպրոցականները հասնում են որոշակի մոտիվացիայով, բարոյական վերաբերմունքով: Ինքնահաստատման կողմնորոշումը, մրցակցությունը, ձախողումներից խուսափելը դառնում են ստեղծագործելու խոչընդոտ անգամ մեծ ինտելեկտուալ ներուժով: Ուստի ուսուցչի առջև խնդիր է դրված ստեղծագործական անհատականությունը կրթել որպես ամբողջականություն այլ ոչ միայն անհատական որակների ձևավորում: Մարդու ստեղծագործական կարողությունը կյանքի բոլոր քննազնվածներում նոր բան ստեղծելու կարողության և դրա նկատմամբ զգայնության մեջ է:

Ֆիզիկական գիտելիքների ձեռք բերման ուսուցումն առավել արդյունավետ դարձնելու համար կարևորել ենք հատկապես սովորողների ինքնուրույնությունը և ստեղծագործական ունակությունները: Ուստի մեր առջև նպատակ ենք դրել զարգացնելու դրանք: Հարց է ծագում՝ ինչպե՞ս ստեղծել ստեղծագործական միջավայր, ապահովել ակտիվ մասնակցություն, նպաստել ինքնուրույնության, տրաբանական, ճանաչողական, հետազոտական գործունեության ակտիվության բարձրացմանը: Այս հարցի լուծմանը կարելի է հասնել հատկապես սովորել սովորելու կարողության միջոցով:

Ինքնուրույն և մյուսների հետ համատեղ ճանաչողական հետաքրքրության զարգացումը հնարավորություն է տալիս արդյունավետ սովորելու, աշխատելու կյանքի տարբեր իրավիճակներում, ճանաչելու իմացածի և չիմացածի սահմանները, ձևավորելու ժամանակի արդյունավետ կառավարման, տեղեկատվության տարբեր աղբյուրների հետ աշխատելու հմտություն, ցուցաբերելու ստեղծագործական նորարար մոտեցում:

Ինչ ուղիներ ենք առաջարկում այս խնդրի լուծման համար .

1. Ցույց տալ ,որ գիտելիքը ոչ թե ուղղակի ձեռք բերած տեղեկություն է ,որը կարող է շատ փոփոխվել,այլ հմտություն՝ տեղեկություն գտնելու:

2. Ձևավորել հմտություն՝ օգտագործելու գիտելիքը կոնկրետ իրավիճակում:

3. Սովորեցնել համարժեք գնահատել իրեն, շրջակա աշխարհը, իր տեղը այս աշխարհում:

Աշխատանքային բազմամյա փորձի արդյունքում եկել ենք այն համոզման, որ սովորողների մոտ յուրահատուկ մտածելակերպը, նախաձեռնությունը, ստեղծագործական ընդունակություններն ու ինքնուրույնությունը լիարժեք դրսևորում և զարգանում են տարաբնույթ ուսումնական գործընթացներում, որոնք էլ ունեն հետազոտական ուղղվածություն: Ուստի մեր առջև նպատակ ենք դրել .

- Կազմակերպել ինքնուրույն աշխատանքի տարբեր ձևեր
- Օգտագործել տարբեր մեթոդներ, հնարներ ըգործիքներ, որոնք կնպաստեն ինչպես խմբային, այնպես էլ անհատական աշխատանքներում սովորողների ինքնուրույնությանը և ստեղծագործական ակտիվության զարգացմանը:
- Ստեղծել այնպիսի միջավայր, որը կապահովի սովորողների պատասխանատվության, կազմակերպվածության, համագործակցության, նախաձեռնակության և ակտիվության դրսևորումները:
-

4. Ինքնուրույն աշխատանքներ կատարելու պահանջները դասապրոցեսում

Մի՛ վախեցիր սխալ գործելուց, վախեցի՛ր միայն այդ սխալներին ուղղված ստեղծագործական, կառուցողական, ուղղիչ աշխատանքների բացակայությունից:
Մթիվեն Ռ. Քովի

Ցանկացած ինքնուրույն աշխատանք պետք է ունենա որոշակի նպատակ, սովորողը պետք է իմաստ դրան հասնելու ուղիները .

1. Ի՞նչ պետք է անեն իրար հետ առանց ուսուցչի միջնորդության,
2. Ի՞նչ պետք է անի յուրաքանչյուրը ինքնուրույն:

Սովորողի ուսումնական հնարավորությունները պետք է համապատասխանեն ինքնուրույն աշխատանքի, իսկ անցումը բարդության մեկ մակարդակից մյուսին պետք է լինի աստիճանաբար:

- Ուսուցիչը պետք է առաջարկի աշխատանքի գանազան ձևեր,
- Ուսուցիչը պետք է միայն ուղղորդի աշխատանքի ընթացքը,
- Ինքնուրույն աշխատանքը չպետք է ունենա խիստ սահմանափակումներ:

Ինքնուրույն շխտքը ստիպում և վրժեում է սովորողի հրերի պտսխը գտել կարողալ լրացուցիչ գրքեր, առանձացնել գլխվորը տալ բացատրություն, բնական երևույթները մեկնաբանել, մտածել և փնտրել, առաջ քաշել վարկած, ձեռք բերել գիտելիքը ինքնուրույն:

Ստեղծագործական բնույթի ինքնուրույն աշխատանքները հնարավորություն են ընձեռնում աշակերտներին ձեռք բերել իրենց համար սկզբունքորեն նոր գիտելիքներ:

5. Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը

Փորձը ցույց է տալիս, որ՝

- Ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքը պարբերաբար անցկացնելով՝ սովորողներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդման դեպքում:
- Ըստ դիդակտիկական նպատակի և բովանդակության տարատեսակ ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:
- Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի՝ արագացնում է սովորողների՝ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը, իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:
- Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքի պարբերաբար կազմակերպման և տրված առարկայից տրվող տնային աշխատանքների բազմազան տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում է ինքնուրույն աշխատելու հիմնարարկարողությունները:

Վերը գրվածից պարզ է դառնում, թե որքան մեծ նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում: Տարրական դասարաններում գործունեություն ծավալելու կարողության ձևավորումը, իսկ այն հնարավոր է իրականացնել սովորողների ինքնուրույն գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների

ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք: Այն իր մեջ ներառում է վեց հիմնական փուլեր.

1. կազմակերպչական. Մա երեխաների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է:

2. Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:

3. նախապատրաստական. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, շխանգարել իր ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այն, այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:

4. կողմնորոշիչ. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովանդակությունը: Նա ստանալով առաջադրանք՝ ընթերցում կամ վեր ընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան կամ գծագիրը, ընթերցում է խնդիրը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստավորում առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, թե ինչ պետք է իմանալ կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում աշխատանքի կատարման համար: Երեխաները ծանոթանում են առաջադրանքի բովանդակությանը: Այս փուլում ձևավորվում է ուսումնական աշխատանք ծավալելու կարևորագույն կարողություններից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողությունը:

5. հիմնական փուլ. Այս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:

6. ամփոփիչ փուլ. Այս փուլում կատարվում է անցուդարձ: Ուսուցիչը գնահատում է, քննարկում է, վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները:

Նպատակահարմար է առաջադրանքի կատարման ստուգման համար առանձնացնել ևս մեկ կառուցվածքային փուլ՝

7. ստուգիչ փուլ, որի ընթացքում աշակերտը կատարելով առաջադրանքը՝ ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն, այսինքն՝ իրականացնում է ինքնաստուգում և ինքնավերահսկում:

Կազմակերպելով սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ ուսուցիչը պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին.

- Տվյալ ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի ու փուլում է նպատակահարմար կազմակերպել ինքնուրույն աշխատանքը,
- ինքնուրույն աշխատանքի ինչ տիպ է անհրաժեշտ ընտրել և կիրառել գիտելիքների յուրացման տվյալ փուլում:

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասի:

Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և , վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն: Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:

Դասի պլան 8-րդ դասարան

Դաս 2 Հավասարաչափ արագացող շարժում

(Նոր ուսումնական նյութի ուսումնասիրության)

Դասարան VIII	Ուստարի-2023-2024
Թեման	Հավասարաչափ արագացող շարժում
Դասի նպատակը	<ol style="list-style-type: none"> 1. Գաղափար տալ հավասարաչափ արագացող շարժման մասին 2. ներմուծել նոր ֆիզիկական մեծություն՝ արագացում 3. բանաձևը չափման միավորը 4. ֆիզիկական իմաստը
	նոր նյութը ինքնուրույն ուսումնասիրելու կարողությունը, ընդհանրացնելու, եզրհանգումներ կատարելու կարողունակությունները
Վերջնարդյունքները	<p>Արդյունքում սովորողը պետք է կարողանա՝</p> <p>Իմանա՝ հավասարաչափ արագացող շարժում, դրա սահմանումը,</p> <p>Ներկայացնել արագացման բանաձևը, ֆիզիկական իմաստը, միավորը</p> <p>Կարողնալ՝ բերել հավասարաչափ արագացող շարժման օրիակներ, որոշել արագացման ուղղությունը, հաշվել թվային արժեքը</p>
Միջառարկայակն կապերը	Հայոց լեզու-կարողանա հասկանալ կարդացածը, ներկայացնել դասարանին, առաձնացնել

	կարդացածի կարևոր գաղափարները: Հանրահաշիվ՝ -Կարողանա կատարել գործողություններտառային արտահայտություններով կոտորակների հետ, կատարել չափման միավորների ձևափոխություններ
Ցուցադրումներ	Թեք հարթությամբ գնդիկի գլորելը
Ուսուցման մեթոդները	Զրույց, մտազրոհ, ցուցադրում, դիտում, աշխատանք դասագրքով, խնդիրների լուծում

Դասի ընթացքը

Խթանում (10 րոպե)

1. Նախորդ դասի վերաբերյալ հարցերի պարզաբանում

2. Դասարանում աշակերտների հետ լրացնել հետևյալ աղյուսակի և II սյունակները

I Գիտեն հավասարաչափ արագացող շարժման մասին	II Ուզում են իմանալ հավասարաչափ արագացող շարժման մասին	III Սովորեցի հավա- սարաչափ շարժման մասին

Իմաստի ընկալում(25րոպե)

Դաս 2 ուսումնասիրել նյութը և ուսուցչի ուղղորդմամբ պարզաբանել առաջացած հարցերը:

Կշռադատում(10րոպե)

1. Աշակերտները ինքնուրույն լրացնում են աղյուսակի 3-րդ սյունակը:

2. Ամփոփել դասը §2-ի վերջին հարցերով, գնահատել դասի սկզբի աշակերտների բանավոր պատասխանները և աշխատանքը ամբողջ դասի ընթացքում:

«Երեխային դիտարկելուց հետո ակնհայտ է դառնում, որ նրա մտքի զարգացումը շարժվելու արդյունք է»: Մարիա Մոնթեսորի (իտալացի մանկավարժ)

Մեր դպրոցներում էլ ամեն ինչ հարմարեցված է լսելուն, քանի որ գրքից դասի

սովորական սերտումն ուղղակի լսելու մի այլ տեսակ է: Այլ կերպ ասած՝ «լսելը»

նշանակում է պասիվություն, սերտում. ենթադրվում է, ուսուցչի կողմից

պատրաստված որոշակի պատրաստի նյութ, որից աշակերտը հնարավորին չափ քիչ ժամանակում պետք է սերտի հնարավորին չափ շատ: Ավանդական դպրոցական սենյակում երեխայի եւ նրա ինքնուրույն աշխատանքի համար շատ քիչ տեղ կա:

Արհեստանոց, լաբորատորիա, նյութեր, գործիքներ, որոնց միջոցով երեխան

կարողանար կառուցել, ստեղծել, ինքնուրույն հետազոտել, չկան, շատ դեպքերում

նույնիսկ սրանց համար անհրաժեշտ տեղը բացակայում է: Երեխայի տեսակետից դպրոցի ամենամեծ թերությունը դպրոցից դուրս ձեռք բերված փորձը դպրոցում ազատ եւ ամբողջությամբ օգտագործելու անհնարինությունն է, եւ հակառակը՝ դպրոցում սովորածը ամենօրյա կյանքում կիրառել չկարողանալը («ինչի՞նչ է պետք»): «Մա է դպրոցի կտրվածությունը կյանքից: Երբ երեխան հայտնվում է դպրոցական սենյակում, մոռանում է մեծ մասն այն մտքերի, հետաքրքրությունների և գործունեությունների, որոնք առաջնահերթ դեր են խաղում, երբ նա տանն է, հարեւանների հետ»:

Միտքը մարդկային օրգանիզմի ամբողջությունից կտրված ինքնուրույն էություն չէ:

Այն, ինչ միտք ենք անվանում, կազմավորվում է հասարակական փորձի արդյունքում. մտավոր կարողությունները փորձով են ստեղծվում, ինչպես ջրի էներգիան ստեղծվում է ամբարտակի միջոցով:

Գիտնականի կարծիքով «դա փորձի այնպիսի ձևափոխումը և վերակազմավորումն

է, որը մեծացնում է արդեն ունեցած փորձի արժեքը, ինչպես նաև հետագա փորձերը յուրացնելու ընթացքը ուղղորդելու կարողությունը»: Հինգ տասնամյակ հետո պատմաբան Մ. Քերթին ավելի պարզ դարձնելու նպատակով վերաձևակերպեց այդ սահմանումը: Նրա կարծիքով, կրթությունն ասելով, պետք է հասկանանք այն, որ «անցած փորձը վերապրվում և վերակազմավորվում է նոր փորձի լույսի ներքո»

Անձի ստեղծագործականությունը, նախաձեռնությունը բարձրանում է, երբ առկա են պայմաններ, համապատասխան միջավայր, հարմարեցումներ ըստ կարիքների: «Դպրոցը չի կարող լինել պարզապես երեխաների դասդասման համակարգ: Կրթությունը պետք է օգնի եւ հնարավորություն տա երեխային՝ բացահայտելու իր

կարողությունները, ձևավորելու և աշխարհ գալու որպես անհատ: Չպետք է թույլ տալ, որ ապրող երեխայի մեջ մեռնեն տաղանդներ»:

Այն փորձերը, որոնք պայմանների ու լաբորատոր գույքի պատճառով անհնար է

կատարել, փորձում ենք փոխարինել այլընտրանքային միջոցներով: ՏՏ-ի կիրառումը դասապրոցեսում օգնում է ուսումնական նյութը ներկայացնել անիմացիաներով, ձայնատեսային տեղեկատվությունով, արդյունավետ անցկացնել ուսումնական գործընթացը, որի արդյունքում աշակերտների համար յուրացվող նյութը դառնում է առավել մատչելի եւ հետաքրքիր: Այս առումով դիտարժան ու հանձնարարելի են ինտերակտիվ լաբորատոր աշխատանքներ [/esovorir.am/](http://esovorir.am/) ուսումնական կայքի տեսանյութերը: Այն անվճար աղբյուր է եւ նպաստում է տարժամանակյա, անհատական ուսուցման

արդյունավետությանը: Տեսանյութի ավարտից հետո սովորողը առաջադրանքներով ստուգում, ամրապնդում է սովորածը:

Ստեղծագործականությանը, ինքնուրույնությանը նպաստող միջոց են dshh.am

կայքում տեղադրված Ֆիզիկայի 7-րդ դասարանի նոր սերնդի դասագիրքն ու

մեթոդական ձեռնարկը (հեղինակներ՝ Մամյան Ա., Անանիկյան Տ., Մամվելյան Կ.)՝

հարստացված ՏՏ ռեսուրսներով, պայմանական նշաններով: «Նախկինում մարդիկ ձեռք էին բերում գիտելիքներ ու հմտություններ և տևական ժամանակ դրանք կիրառում էին: Այսօր դա հնարավոր չէ: Հետևաբար, կրթության համար առաջնային է դառնում անյալիսի հմտությունների ձևավորումը, որոնք առավել համընդհանուր են: Այդպիսիք են ստեղծագործականությունը, որոշումներ կայացնելը, կոնֆլիկտների լուծումը, տոկոսությունը: Այս հմտությունները, առանց երեխայի ամբողջական զարգացման, հնարավոր չէ ձևավորել»: «Ֆիզիկա» առարկայի դասավանդման ընթացքում սովորողների ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունը, նախաձեռնությունը զարգանում են այն ժամանակ, երբ կարողանում են կյանքում, կենցաղում, իրենց առօրյայում տեսնել այդ կապերը, ինչն անհնար է կյանքից կտրված ուսուցման պարագայում: Օրինակներով ուսուցումը տպավորիչ է դարձնում, հիշում են: Օրինակ՝ հարցադրումների հնարը հաճախ կիրառում ենք իրենց հետ պատահած դեպքերի նկարագրությամբ՝ վերլուծելով պատճառահետևանքային կապերը: «Մեխանիկական շարժում», «Արքիմեդյան ուժ», «Դիֆուզիա», «Ճնշում» թեմաներն ծանոթ են իրենց բնագիտությունից, ուստի ավելի շուտ են ընկալում, արձագանքում: Օպտիկայից ոսպնյակներ անցնելիս, ակտիվանում են տեսողական խնդիր ունեցող աշակերտները՝ պարզելու պատճառները:

Հետազոտության ընթացք

Հետազոտություններն իրականացրել են այն դպրոցում, որտեղ աշխատում են : Դասավանդում են ֆիզիկա առարկան 7-12-րդ դասարաններում: Հետազոտության համար վերցրել են 1 թեմա և ըստ նոր չափորոշչային պահանջների՝ գրել են դասի պլան և իրականացրել են : Ուսումնասիրվող թեման ընտրել են 8-րդ դասարանի դասագրքից «Հավասարաչափ արագացող շարժում »թեման: Դասարանում սովորում են 5աշակերտ, 4 տղա, 1 աղջիկ: Այս դասն ընտրել են առավել ցայտուն ցույց տալու համար ֆիզիկայի դասաժամերին սովորողի մոտ արժեհամակարգի ձևավորմանը նպաստող նպատակներին անդրադառնալու համար : Այս դասի համար ունեի նախապես սահմանված հետևյալ նպատակները՝ Այսօրվա դասի գիտելիքները սովորողները կօգտագործեն հաջորդ դասերին ... Հավասարաչափ արագացող շարժում, արագացում ; Այս դասի թեման կապվում է իրական կյանքին հետևյալ կերպ ... Ինչպես արդեն պարզ է դառնում՝ կիրառել են դասի պլանի կազմման մեջ հանրակրթական պետական չափորոշչով սահմանված կետերը՝ չափելի նպատակներ և նշել են , թե այս դասը սովորելիս աշակերտն ինչը կարժևորի և ինչպես կկիրառի իրական կյանքում: Սահմանել են նաև վերջնարդյունքներ՝ Աշակերտը կկարողանա ՀՊՉ՝ից բխող վերջնարդյունքներ Բերել հավասարաչափ արագացող շարժման օրինակներ, տալ արագացման սահմանումը , միավորը և ֆիզիկական իմաստը :Աշակերտներին հատկապես դուր է գալիս, երբ դասը կապում են իրական կյանքի հետ և ցույց են տալիս իրական գործածության տարբերակներն ու կիրառումը: Այսպիսով՝ իմ կատարած հետազոտական աշխատանքում կարևորելով ինքնուրույն և ստեղծագործական ունակությունների շեշտադրումը գտնում են , որ դասը կարելի է էլ ավելի արդյունավետ իրականացնել :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամեն ինչի հիմքում դրված է ազատության գաղափարը: Վստահել երեխային, հնարավորություն տալ նրան ընտրելու կրթության սեփական ուղի, օգնել նրան սեփական ճանապարհն անցնելու՝ նպաստում են սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը: Այսինքն՝ ուսուցման գործընթացի կազմակերպման նոր ձևերը, մեթոդները և տեխնոլոգիաները ճիշտ և տեղին կիրառելիս կնպաստեն մարդու ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռք բերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ինչը այսօր արդիական ու խրախուսելի է համակողմանի զարգացած անհատականություն ձևավորելու գործում:

Սույն հետազոտության մեջ հաշվի առնելով ուսումնասիրված թեմայի նպատակներն ու դրանից բխող խնդիրները՝ կատարեցինք հետևյալ եզրահանգումները՝

- նախաձեռնողականության, ինքնուրույնության ու ստեղծարարության զարգացման գործում առանցքային դեր ունի հանրակրթական ուսումնական հաստատությունը
- նախաձեռնողականություն, ինքնուրույնություն ու ստեղծարարություն ունակությունների բնականոն զարգացումը մեծապես կապված է ուսուցչի աշխատանքից՝ դասի պլանավորումից մինչև մեթոդների ու հնարների ընտրություն
- կրթության ոլորտի արդի բարեփոխումները մեծապես նպաստում են սովորողների մեջ հետազոտական ու ստեղծարարության ունակություններ զարգացնելու, ինչպես նաև վերջիններիս դասապրոցեսի մեջ ավելի արդյունավետ ներգրավելուն
- ֆիզիկայի դասավանդման շրջանակներում ճիշտ պլանավորված դասի ընթացքը կարող է մեծապես նպաստել սովորողների մոտ գիտելիքների ամրակայումից բացի գործնական կարողություններ ձևավորելուն
- փոխգործուն մեթոդների կիրառումն օգնում է սովորողին լինել ավելի բաց համագործակցության համար, ինչպես նաև նպաստում է նոր կարողություններ ու հմտություններ ձեռք բերելուն;
- ունի հանդես գալ իր նորարարական գաղափարներով, ինչը հնարավոր է միայն ուսուցչի հետ ճիշտ ու կառուցողական համագործակցության դեպքում
- նախաձեռնողականությունը, ստեղծարարությունը ինքնուրույնությունը, որոնք նաև ինքնաճանաչման լայն հնարավորություն են տալիս սովորողին, արդի կրթական համակարգի և առհասարակ կյանքի այլ ոլորտների համար պարտադիր բաղադրիչ է, ուստի սովորողը պետք է ունենա բոլոր հնարավորությունները դպրոցում նման ունակություններ ձեռք բերելու և զարգացնելու:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ջոն Դյուլի, ԴՊՐՈՑԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ, «Դպիր» մանկավարժական հանդես Երևան 2008

2. Ս.Խաչատրյան, Կամուրջներ պատերի փոխարեն Ուսուցման Էկոլոգիա, Երևան, «Անտարես» 2014

3. Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020

4. <https://www.currentschoolnews.com/hy/articles/chinese-proverbs>

5. Ս. Արզումանյան, Հոգեբանություն, Երևան 2003

6 Մամյան Ա., Անանիկյան Տ., Սամվելյան Կ., ֆիզիկա 7,Անտարես 2021

[/https://dshh.am/%d6%86%d5%ab%d5%a6%d5%ab%d5%af%d5%a1-7-](https://dshh.am/%d6%86%d5%ab%d5%a6%d5%ab%d5%af%d5%a1-7-)

